600.0421.31.10.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2012 թվականի №421Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №616Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության գնումների կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանելու մասին» №616Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության գնումների կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջների 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Գնումների կատարման նախընտրելի և հիմնական ընթացակարգ պետք է հանդիսանա մրցույթը: Լիցենզավորված անձի կողմից անցկացվող բոլոր մրցույթները բաց են: Գնումները կարող են կատարվել նաև մրցակցություն ապահովող գնման այլ պարզեցված ընթացակարգերով: Այդպիսի ընթացակարգերը պետք է հստակ նկարագրվեն Լիցենզավորված անձի գնումների կարգում: Մրցույթի և մրցակցություն ապահովող գնման գնումների շեմերը համաձայնեցվում են Հանձնաժողովի հետ: Լիցենզավորված անձը կարող է իրականացնել գնումներ այլ պարզեցված ընթացակարգերով, եթե.

1) ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել,
2) դրանց գումարը չի գերազանցում 25 (քսանհինգ) միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը (ներառյալ բոլոր հարկերը, տուրքերը և այլ վճարները, որոնք առնչվում են տվյալ գնմանը): Լիցենզավորված անձը մրցակցային ընթացակարգեր կիրառելուց խուսափելու նպատակով չպետք է պարբերաբար իրականացվող գնումները բաժանի առանձին խմբաքանակների, փոխի գնման պայմանագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը,
3) անհրաժեշտ է իրականացնել տարածքի վարձակալության կամ օգտագործման, ցանցերի փոխկապակցման և տրաֆիկի փոխանակման, տեղական կամ միջազգային կապուղիների վարձակալության, միջազգային զանգերի վերջնավորման ծառայությունների, ինչպես նաև էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների գնում,
4) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ,
5) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 հոկտեմբեր 2012թ.
ժամը 16[00]